Հավելված 3

Հաստատված է

Քոլեջի կառավարման խորհրդի

<< 15 >> սեպտեմբերի 2023 թ

(արձանագրություն № 3)

Հաստատում եմ

Տնօրեն Է.Մուրադյան

<<15>> սեպտեմբերի 2023 թ

ԱՐՄԱՎԻՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՊՈԱԿ-Ի

ՆԵՐՔՈԼԵՋԱՅԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

/փոփոխություն և լրացումներ /

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թ. օգոստոսի 24-ի թիվ 1449-Ն որոշումը <<Արմավիրի արվեստի պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի ներքոլեջային կրթաթոշակ տրամադրման և ուսման վճարի փոխհատուցման կարգի 3 դրույթում՝ ուսման վճարի փոխհատուցումը / լրիվ կամ մասնակի/ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները .

1. Ուսման վճարի փոխհատուցումը / լրիվ կամ մասնակի զեղչ/ դրույթի 3.1 կետում << հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը և ոչ բարձր առաջադիմության արդյունքները>> բառերը փոխարինել <<հաշվի առնելով ուսանողի սոցիալական վիճակը և բարձր առաջադիմության արդյունքները>> բառերով

2. Ուսման վճարի փոխհատուցումը /լրիվ կամ մասնակի զեղչ/ դրույթի 3.1 կետի 5 –րդ ենթակետից հետո լրացնել նոր ենթակետերը հետևյալ բովանդակությամբ.

6 –րդ ենթակետը՝ 2 և ավելի անչափաս կամ 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ուսանողներին / ուսման վճարի փախհատուցման չափը կազմում է 20 %: /

7–րդ ենթակետը՝ վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին / ուսման վճարի փախհատուցման չափը կազմում է 20 %:

8–րդ ենթակետը՝ բարձրլեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների, ուսումնական հաստատությունների մանկավարժների երեխա ուսանողներին / ուսման վճարի փախհատուցման չափը կազմում է 20 %:

9-րդ ենթակետը՝ մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին / ուսման վճարի փախհատուցման չափը կազմում է 20 %:

10-րդ ենթակետը՝ ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին / ուսման վճարի փախհատուցման չափը կազմում է 20 %: